

ՍՈՒՍԱՆ

# ԱՆՑՅԱԼԻ ԵԶԵՐԻՑ



13

ՊՐՈԼԵՏԱՐԻ - ի

891. 99

21 - 95

ՀԱՅԻ 2011

Պրոլետարիատ բուլոր յերկրների, սիամեց

№ 13

ՊՐՈԼԵՏԱՐԻ

ԳԵՂԱԿՈՎԵՍԱԿԱՆ ԳԱՂԱՔԱԿԱՆ  
ՄԱՍՍԱՑԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

891.99

Ա-95

ՍՈՒՍԱՆ

1809  
39655

1018

ԱՆՁԱՆԻ ԵԶԵՐԻՑ



Պատ. Խմբ.՝ Կ. ԱԶՐՈՅԱՆ  
Թողարկչ. Ս. ԴՐԱՎԱԹԱՆ

## ԱՆՑՅԱԼԻ ԵԶԵՐԻՑ

Հուլիսի վերջերին եր : Այսը մայր եր մտնում : Վսա  
մեղույն բլուրների մեջ կորսած գյուղը տարված եր  
բերքահալաքի յեռուն աշխատանքներով : Կոլխոզը  
վոտքի յեր հանել իր բոլոր ուժերը, վորպեսզի ժամկե  
տից չուտ հավաքեր այդ տարվա առատ բերքը : Բրի-  
գադները ցըմել եյին ընդարձակ դաշտերի զանազան  
անկյուններում ու լծվել խանդավար աշխատանքի :

Հեռափոր բլրի վոտներին փոխած լայնածավալ հո-  
ղերում գործում եր ՄՏկայանի հնձիչը, իսկ այստեղ՝  
կալերում խլացուցիչ հոնդյունով անընդհատ պտո-  
վում եր կալսիչը :

Գետի պես հոսում եր կոլխադային բերքը... և  
պարկերը մեկը-մյուսի յետևից լցվելով, գարսկում  
եյին իրար վրա, բարձրանում-բարձրանում...

Թունդ զործի վրա յեր և՛ կոլխոզի փոխադրող բրի-  
գադը : Մայլապաններն շտապ-շտապ լծում եյին յեղ-  
ները, կարգի բերում պարանները, սայշերի կողափայ-  
տերը, յուղում առնակները : Նրանք հաց եյին տանելու  
քաղաք՝ պետությանը հանձնելու համար : Կոլխոզը վո-  
րոշել եր հենց առաջին կալից կատարել իր պարտքը :

Յերբ ուտելու պաշարեղենն ել յեկավ, բրիգադիր  
Պետոն կարգադրեց .

— Ապա, տղերք ջան, քը՞ք : Սենո, դու առաջ  
ընկիր, յեղներդ փորձված են :

Սենոյի մտրակի ծայրը թեթևակի կպավ յեղների  
մեջին... Յեկ սայլաշարքը շարժվեց գյուղի ծուռ ու  
մուռ փողոցներով, վորը գնում միանում եր նորակտ-  
ուոյց խճուղուն :

Նրանք վորոշել եյին դիմելով անցնել ճանապարհը, վորովհետև թե ազատ եր լինում և թե հով:

Կոլխողնիկ սայլապաններից մի քանիսը նստել եյին սայլերին, իսկ մարգածները խմբված՝ դնում եյին սայլերի յետելից: Նրանք խոսում եյին, ծխում, կատակում:



Սայլաշարքն արգեն դուրս եր յեկելդուղի սահմանից: Գիշերը թեև գնալով նստում եր, բայց այնքան ել մութ չեր. յերկնքին պլայում եյին բաղմահազար աստղեր: Հեռուներում տեղտեղ նկատվում եյին սարերից ու ծերպերից կամած գյուղերի աղոտ ճրադները և լեռներում վասկող խաղույկները, վորոնց շուրջը հովիվները սիլվետների նման չարժվում եյին: Հաղեկ լսելի եյին լինում քրդական մելամաղձոտ մեղեդիները:

Գյուղերից յերբեմն լսվում եր չների հաջոց. ըսկըզրում խմբական, հետո՝ մեկ-մեկ և ազա լոսում շրջակա խավարում:

Քնած եր բնությունը:

Սայլաշարքն սկսել եր վերելքը: Գիշերային լոռաթյան մեջ սայլերից բարձրացող ճռնչյունին միախառնվում եյին կոլխողնիկ սայլապանների ուրախ յերգերն ու բարձրաձայն կատակները:

Գիշերը բավական խորացել եր, յերբ նրանք կտրեցին հսկայական վերելքը: Հողնել եյին անխտիր բոլորը: Հողնել եյին նաև յեղները: Սայլաշարքը կանդ առաջ: Կոլխողնիկները վորոշեցին հենց այդտեղ ել զեշերել: Նրանք յեղները բաց թողին, իսկ իրենք շնուրը զցեցին գետնին, ու վորը պառկած, վորը նրատած պատրաստվեցին հանգստանալու: Շուտով մեկը մյուսի յետելից սկսեցին պեծին տալ նրանց ծխախոտները:

Սուլում եր գիշերային զեխյուռը և դուրակի չույս կոլխողնիկների հոգնած դեմքերն ու որոր ասում դաշտերին, արոտներին ու լեռներին:

Լիալուսինը նոր եր գուրս յեկել հեռավոր լեռան յետելից և կարծես անտարբեր հայացքով նայում եր լուելված բնությանը:

Կոլխողնիկներից վոչ վոքի քունը չեր տանում, Սենոն վորտեղից-վորտեղ սկսեց ինչ-վոր մի հին յերդ իմամալ և հանկարծ նրա ձայնը հնչեց զիլ ու փովեց սարահարթի ընդարձակ տարածության վրա՝

...«Յեվ իմ անզոր թեեբով աղատություն զրկեցի...»

Այդ բառերը լսելիս, մի տեսակ սարսուռ անցավ բրդաղիւր Պետոյի մարմեով: Նրա մտքում իսկույն գծապրվեց վաղուց անցած մի գեպք, նա հիշեց այն գիշերը, յերբ առաջին անդամն եր լուսմ այդ յերդը:

Յերդի ծնած հույզերը պաշարեցին Պետոյի միտքը և անցած զեպքը դարձավ վառ գույներով մի հետքաթ. Պետոն վճռեց ընկերներին պատմել այդ զեպքի մանրամասները:

—Պատմի՞ր, պատմի՞ր, Պետո ջան, դեռ քննելու շատ ժամանակ կա: Ուրախությամբ լլսենք, —այս ու այն կողմից վրա տվին սայլապանները:

Պետոն վառեց հանդած չիրուխը, աղահորեն կու տվեց ծուխը և լիմերն ուղղելով ու ծուխը բերանից դուրս վիշելով, սկսեց.

—Զինվորական ծառայությունը՝ ցարական տիրածուչակ այդ պարտականությունը, ամենախօր կերպով վիրավորել ու ստրկացքել եր իմ հոգին: Շատ մանրամասնություններ կան ու շատ զզվելի զեպքեր, սակայն մի յերկու զեպք, վորն ամենաստոր կերպով թույլ եւ յին տվել մեծավորները զինվորների նկատմամբ-ահա գրանցից ևմ ուղում սկսել:

Քաղաքովմ եյի: Տոն որ եր: Մեզ թույլատրված եր մի քանի ժամով զուրս զալ փողոց, կամ տեսակ-

շության դնալ մեր ունեցած ծանոթներին-աղբական-ներին : Անցնում եյի մեծ հրապարակով : Տեսա քաղաքային այդու մուտքը զարդարված գույնուույն դրու-չակներով ու կանաչով : Մուտեցա դռանը և կարգացի փակցիած հայտարարությունը : Այդ որը «մեծ դրու-սանք» եր լինելու : Արդեն լոյում եր յերաժշտության ձայնը : Շատ ցանկացա մի բոպէ մտնել այդին ու տես նել, թէ ինչ և կատարվում այնտեղ : Հազիվ եյի մոտե-ցել տամս վաճառող կնոջ սեղանին, յերբ վրա հասավ վոստիկանը, թեհց պինդ բոնեց ու մի կողմ քաշե-րով, ցույց տվեց մուտքի կողին յեղած հայտարարու-թյունը .

**ՄՈՒՏՔԸ ՇՆԵՐԻ ՑԵՎ ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ  
ԱՐԳԵԼԱՎԱԾ Ե :**

Խոսքերն անզոր են բացատրելու այն զգացումը, վորը համակեց իմ անչափ վիրավորված ինքնասիրուա-թյունը : Այնքան եյի վրդովկել, վոր ել չեմ հիշում, թէ ինչ կերպ հասա զորանոց : Միայն դիտեմ այն, վոր ընկած թախախու, լաց եյի լինում զղայնությու-նից : Զահել հոգիս լմբոստացել եր, սակայն ի՞նչ կա-րող եյի անել... Ստիպված եյի լոել :

Ավելի վատթարացավ իմ դրությունը, յերբ մի քանի որ հետո մեր Փելզֆերելը հայտնեց, վոր ինչ հրամայված ե դնալ ծառա (գենչչիկ) կապիտանի-տաներ :

Տնային ծանր և անսովոր աշխատանքները ձան-ձքալի եյին ինձ համար : Կապիտանի կինը վոչ մի գործ չեր անում, վորպեսզի ձեռները չփչանան : Չորս յե-րեխա ունելին, վորոնցից մեկը գեռ ծծկեր եր : Յերե-խաներին նայող չկար, մեծանում եյին իրենց գլխի : Ամեն յերեկո ամուսինները դնում եյին ակումբ՝ յերե-խաների ամբողջ հոգաը թողնելով իմ վիխն : Դև յեկ, այդ բոլորին կերպարիր, հսկիր, քնացրու—ուղղակի ուժասապառ եյի լինում, իսկ ամուսինները գիշերվա-ժամը 2-3-ին հազիվ եյին վերադառնում տուն : Յերե-

խաների լվացքն ել յես եյի անում, այն ել՝ մինչև ուշ գիշեր... Այնպես վոր հաճախ գիշերները գրեթե ան-քուն եյի լուսացնում : առավոտները զլուխս պտույտ եր գալիս հոգնածությունից : Դա դեռ բավական չեր, խսկույն սկսվում եր առան դործը . նախ՝ պարտավոր եյի սենյակները հայելու նման փայլեցնել : Խանումը հրամայում եր քրիփի վոտներով ու չոքած սրբել հա-տակները . խողանակները կապում եյի վոտներիս տակ ու հեասպառ փազմղում սենյակից-սենյակ, վոր-պետի ավելի լափ փայլեյին... Ծնկներս կապում, ներքնազգեստս բոլորովին պատուվում եյին : Խոկ յերբ պետք եր լինում դուրս գալ տնից (և զա պա-տահում եր հաճախ) ստիպված եյի չուսո-չուտ գնալ խոհանոց, հաղնել բարձրածիտ կոչկներս, վորպեսզի քիչ հետո, տուն մերգաղանալիս, դարձյալ հանեմ և բորբիկ վրտներով հետեւմ սենյակների մաքրությա-նը :

Խանումը խիստ ու դաժան կերպով պատվիրել եր .

— Թու եղ կոպիտ ու կեղատու սապողները զղայնաց-նում են ինձ . տանը հանի ու ման արի բորբիկ, սուկոն-կաների վրա...

Վայ թէ հանկարծ վորս սիսամբ ընկներ հատա-կինել հայհոյանք, ել յերեսիս թքել, ել անպատիվ խոսքեր եր, վոր տեղում եր գլխիս : Դա դեռ բավա-կան չեր, վրա յեր հասնում և կատաղած կապիտանը և այնպիսի ապտակներ հսուցնում յերեսիս, վոր աշ-քերից կրակ եր թոշում... Արդպիսի ըոպեներին յես, արցունքն աչքերիս կանգնում եյի ահա այսպիս (Պետոն ուղղվեց ու ձեռքը տաքավ դեպի ճակատը, բարև բրո-նող զինվորի նման) և սպասում հրամանի : Խոկ նա բղարվում եր .

— Տավար, ե՛շ, անպետք դյուղացին յերեք ժարդ չի դառնեա :

— Ճիշտ այդպես ե, վաշե վիսոկոսդիյե, —պիտի պատասխանեյի յես :

— Կորի՛ր, մա՛րչ:

— Լսում եմ, վաշե վիսոկոռդիյե... — ասում եյի  
ու վազում խոհանոց:

Գետոն ձեռքը ճակատից իջեցրեց ու տիրամած  
գեմքով շարունակեց.

— Գնում եյի սառնարմանիքում կանդնում, վոր  
մրսեմ, հիվանդանամ ու միքիչ դրանց ձեռքից աղատ-  
վեմ, բայց չեր աջողվում...

Գետոն լոեց: Լուս եյին և ընկերները: Գետոն գըր-  
պանից հանեց կարմիր մեծ թաշկինակը և սրբեց հու-  
զումից ճակատին ծլած քրտինքը:

Սալլապաններից մի քանիսը, վորոնք նույնպես  
ծառայել եյին ցարական բանակում, խորապես զգում  
եյին Պետոյի կրած տանջանքները:

— Զինվորական ծառայությունս վերջացնելուց  
հետո, - շարունակեց Պետոն, - այլևս զյուղ չվերադար-  
ձա, վորովհետև տնից նամակ եյի ստացել, վոր մեր  
յիշները պարտքի տեղ տարել եյին, միակ կովը ստո-  
կել եր, գանքն ու բերքը անաջող եր յեղել այդ տարի,  
իսկ հայրս ու մայրս մատնվել եյին քաղցածության:  
«Դնամ ինչ անեմ. գոնե մնամ քաղաքում, մի զործ կը  
ճարեմ ու կողնեմ ծնողներիս» - մտածում եյի յես:

Եերկար վորոնումներից հետո ինձ աֆորմից անդա-  
վորվել բանտում՝ հսկիչի պաշտոնով: Բանտային վար-  
չությունը վստահեց ինձ այդ ծառայությունը նկատի-  
ունենալով իմ կատարած զինվորական ծառայությունը:  
Նշանակեցին ամսական 15 ոուրլի ոոճիկ... Գրավիչ եր,  
չե՞, մանավանդ ինձն զյուղացու համար:

Ակզրում հսկիչի պաշտոնը - համազգեստ, ատրճա-  
նակ - ինձ թվաց գրավիչ, բայց շատ շուտով հիսաթափ-  
վեցի: Շուտով այնքան ցալատանջ ու սրտաճմլիկ  
պատկեներ տեսա, վոր զզվեցի, նույնիսկ ատեցի վոչ  
միայն տիրող կարգերը, այլ և ինձ, իմ պաշտոնը:  
Երջապատս տաղտկալի յեր ու մատյլ:

Սայլապանները լուս եյին. նրանք մեծ ուշադրու-  
թյամբ եյին լսում Պետոյին, յել յերբեմն խոր հոգոց  
քաշում ու աստղերի թույլ լույսի տակ խորհրդավոր  
նայում իրար յերեսի:

— Գիշերապահ հսկիչի պաշտոնն ինձ եյին հանձ-  
նել, իսկ դոների բանալիները՝ մեկ ուրիշ հսկիչի,  
մորը ոուս եր: Նա յել ինձ նման կարիքից ստիւլած  
եր մտել բանտային ծառայության: Հետո իմացա, վոր  
Սիրիրից եր փախել կեղծ անցազրով:

Իմ պարտականությունն եր գիշերները հսկել քը-  
սեական հանցավորներին, իսկ քաղաքական հանցավոր  
ները այլ կորպուներում եյին տեղակորված: Հսկում  
եյի, վոր չփախչեն, միմյանց չփիրավորեն, դիրք ու-  
լրազեր չկարդան: Իսկ ինձ խստիվ արգելել եյին խո-  
սել մեկն ու մեկի հետ, կամ պատասխանել նրանց  
հարցերին: Արգելված եր նաև բանտարկյալների մեր-  
ձավորների այցելությունը, կամ նրանցից ուտելեղեն  
ստանալն ու բանտարկյալներին հանձնելը:

Սակայն ո՛վ եր համբերում: Ինձ անչա՞փ հետա-  
քրքրում եյին բանտարկյալները. Նրանց անցյալը, բան-  
տարկվերու պատճառը: Հաճախ գաղտնի մոտենում  
եյի մեկին - մյուսին, հարցնում հանցանքի պատճառը:  
Ռուս հսկիչն ել նույն եր անում. Նա, վորպես նախ-  
կին «հանցազործ», շատ եր կարեկցում բանտարկյալ-  
ներին:

Յես և ոուս հսկիչը գնալով ավելի մտերմացանք  
իբար ու դարձանք իրար սիրելի, անբաժան ընկերներ:

Այստեղ Պետոն լոեց: Կարծես կտրվեց նրա մտքի  
թելը: Նա վառեց հանգած չիրուխը ու մի պահ մտա-  
ծելուց հետ շարունակեց:

— Հա, մենք մտերմացանք: Գաղտնապահ և աղ-  
նիվ մարդ եր եղ ոուսը: Մի որ մոտեցանք քաղաքա-  
կան բանտարկյալների բաժնին: Յես նկատեցի մի  
շատ լավ կովկասեցու զեմք: Նոր եյին բերել: Բողոք  
ու վիշտ եր զագագրված նրա դեմքին: Իմ այն հարցին,

թե ինչու յե ձերբակալված, նա դլուխը քաշ զցեց ու լոեց: Նրա լոռւթյունն այնքան եր հուզել մեղ, վոր այլևս թույլ չտվինք մեղ մի նոր հարցով իմանալ նրա բանտարկության պատճառը:

Յես և ընկերս բանտարկյաների խմբից հեռացանք տիուր ու ընկերած:

Մի ամսից ամել եր, ինչ ինձ ու ընկերոջս տեղափոխել եյին քաղաքական հանցավորների բաժանմունքը:

Գիշերվա ժամը 11-ը կլիներ: Միջանցքում վոչ վոք չկար: Ընկերս մոտեցավ ինձ շատ վլրդովված և հայտնեց, վոր իր կեղծ անցագիրը վտանգված է, բանտարյին վարչությունը կասկածում է արդեն, վորովհետեւ անցագրում այլազդի անուն և ազգանուն է գըրած, իսկ ինքը, բացի ոռուսերենից, այլ լեզվով վոչ մի խոսք չգիտե: Միաժամանակ հայտնեց, վոր իմ զըրությունն ել է վատ. նկատել են, վոր հաճախ եմ լինում բանտարկյաների մոտ, մանավանդ այն ոռուս կալանավորի, վորի պատմությունն այնպէս գրավել եր իմ ուշադրությունը: Ընկերս վրդովված հեռացավ՝ ասելով, վոր կես ժամից դարձյալ կզա:

Սովորականի նման մոտեցա այն կամերային, ուր գտնվում եր ինձ հետաքրքրով կալանավորը: Թիկնեղ ու բարձրահասակ եր այդ մարդը, մազերն ու մորուքն այնքան եյին յերկարել, վոր մի տեսակ խորհրդավոր տեսք եյին ավել նրան: Տարիքը շատ դժվար եր վորոշել: Դարձյալ շարունակում եր վոչ մի խոսք չսուել իր մասին: Միայն յերկոնքը, քնելուց առաջ, զնդում եր, ա՛յ, Սենոյի քիչ առաջկա յերգած յերգը. «...Յեզի իմ անդոր թեքերով ազատություն գրկեցի»...: Առաջին անդամ յերբ լսեցի այդ բառերը, ինձ թվաց, թե մի նոր աշխարհ էմ ընկնում, ուր այլևս չկան քյոխի ու ըստրամիկի մտրակները, ուր բացվում է մի նոր ու ազատ կյանք... Հա, զնդում եր ու շուտ-շուտ մոտենում դռանը հարցնում, թե վո՞ր ժամն է; Նրան պա-

հում եյին առանձին ու շղթայակապ: Մեկ ասում եյին սոցիալիստ է, հետո տերրորիստ է, ինչ-վոր մեծավասի յե սպանել: Պատմում եյին, վոր բանվոր է յեղել ինչ-վոր գործարանում: Պատուհան չունել նրա կամքուան: Լույսը փոքր չողերով նեբա եր սողում այն անցքից, վորտեղից ստանում եր ուտելեղեն ու ծխախոտ: Կալանավորը զատապարտված էր մահապատճի: Այդ հանդամանքը հայտնի յեր նրան: Հենց այդ պատճառվ արգելված եր մեղ՝ նրան հայտնել ժամանակի մասին: Իսկ նա այդ մշտական մթության մեջ չեր կարողանում վորոշել ժամանակը, սակայն լավ դիտեր, վոր մահապատճի դատապարտվածներին սովորաբար տանում են դիշերովա ժամը 3-ին: Յեկ իր մութ ու խոնավ կամերայում ջղայնացած անց ու դարձ եր անուած խեղճը և ամեն դիշեր շուտ-շուտ մոտենում դռանը և ինձ հարցնում ժամը: Յես լավ եյի հասկանում նրա միտքը և շարունակ խարում եյի, թե ժամը 3-ն անց է, նա կարծես միամտվում եր և դնում-պառկում իր չոր թախտին հանդպատանալու:

Այդ որն ել, յերբ կանդնած սպասում եյի ընկերոջը, կարանավորը մոտեցավ դռանը և այս անդամ, վորիսանակ ժամը հարցնելու, նշան արակ, վոր դուռը բաց անեմ: Յես պարզ տեսնում եյի, թե վորպիսի խորը թափիծ ուտում եր նրա միտքը և պարզ զդում եյի, թե այդ սկ ու մոայլ պատերի մեջ ինչպիսի ցավ ու չողեկան տանջանք և ապրում խեղճը: Լուրջ եր ու պատկառելի նրա մազածածկ գեմքը: Նա դուռը բացելու մասին ինդիքց վոչ թե աղերսական ձեռվ, այլ այնպիսի հմայիչ արտահարտությամբ, վորը զժվար և անտեսելու Յես թեթև բաց արի դուռը, և նա խնդրեց, վոր մեղնից մեկն ու մեկը զնա իմաց անի մորը դատապատճի մասին, տալով, իհարկե, մոր հասցեն:

Ճնշող եյին վայրկյանները: Մի ցուրտ սարսուռ անցավ մարմնովս, ինչպես հայտնել մորը այդ ահավոր լուրը... Շուտով մոտեցավ և ընկերս, մի հանդու

Քիտք ծագեց զլիսումս, և անմիջապես դիմեցի ընկերովս.

— Բանալիները քո ձեռքին ե, մեր դրությունը վրանգված ե, իսկ այս թշվառ կալանավորին ել մահ և սպառում... Արի փախցնենք դրան ու մենք ել փախչենք, հեռանանք:

Յերկուս ել մի պահ լուեցինք: Ընկերս պիշտին այսքերիս մայում եր աչքերիս: Ինձ թվում եր, թե կասկածում ե: Մի քանի վայրկյան մտածելուց հետո, պատասխանեց:

— Փախչենք: Բայց ապրուստի միջնց... Իսկ վորբոնց...

— Ի՞նչ վախկուսն ես, իսր քաղցած չենք մեռնի, ի հարկ մի զործ կճարվի մեղ համար այս լայն աշխարհում:

Վորոշեցինք անպայման իրազործել մեր մտադիր թյունը: Ընկերս խոստացավ բերել իր հին շորերն ու դիմարկը, վորպեսզի հաղցնենք այդ կալանավորին ու կարողանանք փախցնել նրան:

Հետևյալ որև իմն եր դիշելապահի հերթը: Յերբ դիշերը բավական խորացել եր, դարձյալ լուցի նույն յերդի մեղմ ձայնը... Կալանավորը յեկել կանոնել եր դռան յետեւ: Հարցը եց վամը:

— 12-ն ե:

— Մորս հայտնեցի՞ք, ի՞նչ ասեց...

— Այո, այո... Բայց... վոչ, կարիք չկամորդակելու... Դու, զու պատրաստ յեղիր... Ուզում հնչ քեզ փախցնել...

Յես գոան անցքից պարզ նկատում եյի թենա ինչ պես հուզվեց: Նա սովորականի նման չհեռացավ դրուն յետեից, նա յերկար նայեց ինձ, նայեց ու հեկեղ ձայնով մի ինչ վոր բան հարցը եց. յես ինքս ել հուզված եյի չափաղանց... Այդ բունեյին իմ աչքերի

առջև պատկերացավ ցարական կարգերի անորինությունը, վոճիրը, կրակը, արյունը, արցունքը... Էմբաստության մի ալիք մեր բարձրացել իմ որտում, ուզում եյի բռնել և վոչնչացնել բոլոր նրանց, վորոնք ծնում եյին այդ չարչարանքն ու տառապանքը աշխատավոր մարդկության համար: Մի բոպե թվաց, վորբանակի յերկաթյա մեծ դուռը բացվեց, ու ներս թափվեցին նաև տառնելու զոհին...

Հենց այդ պահին ընկերս իր հագուստը ձեռին մոտեցավ: Այնքան հուզված եյի, վոր սկզբում չձանաժեցի, թե դա նա յե մենակ նա... ուժերս հավաքեցի, դդաստացաւ: Մոտեցանք մեր բանտարկյալի դռանը: Շատ դդուշ թիվարդի, նա մոտեցավ: Ընկերս դուռը բացեց ու հանձնեց չորերը: Կալանավորը, առանց ձայն հանելու, հուզումը զսպելով, արագ-արագ հազնվեց, դիմին ծածկեց մեր տված հին դիմարկը և իսկուն դուրս յեկավ իր զնդանից:

Միջանցքում ամայություն եր տիրում: Մի քանի բոպե կանոնեցինք վորպես հսկիչներ և ապա անմիջապես հեռացանք այդտեղից, անցանք մի քանի կորպուս և ապա՝ զեպի փողոց...

Դրսի սրահապան զինվորը լսով դիտեր, վոր ժամը 12-ին փոխվում են հսկիչները, այնպես վոր ուշադրություն անդամ չդարձրեց մեղ վրա: Շշուկով մի քանի խոսք փոխանակեցինք և հասկացրինք միմյանց, վոր ամեն մեկս ընտրենք առանձին ճանապարհ և մոտակա անտառում հանդիպենք իրար: Իրարից բաժանվելին, յես կալանավորին մի քիչ փող տվի, վորպեսզի անհրաժեշտ կարիքները հոգա, մինչև մեր միանալը:

★ ★ ★

Անտառը խիտ եր և հսկա: Մեզ թվում եր թե ամեն կողմից ծառերի արանքներից պետք է մեղ վրա հարձակվեն զաղաներ, ավաղակներ: Մեծ դժվարու-

թյամբ մի քանի որից հետո մենք կտանք իրար։ Հայը յերբեմն պատահմամբ անցնող գյուղացիներից ելինք խնդրում։ Նրանք մեղ թարիսառաշրջիկ աղքատների տեղ ելին դում։ Մոռացա ասել, վոր յերբ հանդիպեցինք կալանավորին անտառում, յես սկզբում չճմառաչեցի նըրան, այնքան վոր փոխվել եր առանց միթուքի։ Այժմ պարզ յերեսում ելին նրա առանձին դիմագծերը, լայն ճակատը, դանդուր խիտ մաղերը։ Գունատ դեմքի մը կաններին մի աշխույժ ժամկեր։ Այժմ արդեն կարելի յեր դորչել նրա տարիքը։ Նա կլիներ մոտ 40 տարեկան։ Պարզվեց նաև այն, վոր նա յեղել ե բանվոր, մեխանիկ։ Անունը Ռուբեն եր։ Հաճախ եր պատմություններ պատմում բանվորական գործադուլներից, ապօստամբություններից և գլափում մեր ուշադրությունը։ Նա մի անգամ պատմեց նաև իր կենսադրությունը։

Ռուբենը փոքր հասակից ընկել եր քաղաք, յեղել ե տպարանի նյութեր հաշաքող փոքրիկ աշակերտ, միենույն ժամանակ ձու ծախող։ Նա ձիերի տակ թագնելով տեղափոխելիս ե յեղել թուոցիներ։ Եերբ դառել ե 10-12 տարեկան, սկսել ե կատարել ավելի խոշոր և պատասխանատու գործեր գիշերները վորոցների սրատերին հակալառավարական պլակատներ ե փակցրել և այնպես ճարպիկորեն, վոր միշտ ել խուսափել ե վոստիկանների աչերից։ 16 տարեկանին Ռուբենն արդեն գրաչար ե դարձել և մտել բուշեկյան կուսակցության շարքեր։ Հենց այդ տարիքին ել նըրանց բնակարանը խուզարկելուց հետո նրան ճերբարակը են։ Այդ որվանից Ռուբենն իր կյանքն անց ե կացը մեծ մասմամբ բանտերում և աքսորավայրերում։ Բայց թե այս անգամ ինչու յե ճերբարակը աճ ու դատապարտված մահվան-այդ մասին նա վոչինչ չասեց։

Ռուբենն իր առորյա խոսակցությունների ժամանակ միշտ հուսագրում եր մեղ՝ գյուղացիներիս, վոր

շուտով դառնալու յենք մեր գյության տերը. գյուգերում ծավալվելու յե համատարած ուսում։ Յերբ նոռ բենը բարձրանում եր ծառերի ճյուղերին հասած պըտուղներ քաղելու, ալիքի յեր արամադրվում և խոսում եր վառ հեռանկարներով, վոր այդ ընդապահականառները, հողերը, բոլորը մեզ են պատկանելու, մեղ՝ աշխատավոր գյուղացիներիս և հաճախ կրկնում եր։

— Մոտ ե հողազուրկ և ընչազուրկ մասսաների հաղթանակը . . .

Մենք այդ կերպ ապրեցինք մոտ մի շաբաթ։ Սակայն ալելին չեր կարելի. մենք պետք ե կորցնեյինք մեր հետքը։ Անհրաժեշտ եր բաժանմիկ, թեև դա շատ ծանր եր մեղ համար։ Հարկավոր եր գործ, ապրում մի միջոց ճարել։

Նրանք յերկուսով վորոշեցին գնալ հեռավոր մի քաղաք ու վորպես բանվոր մտնել մի վորեե գործարան, իսկ յես վերադառնությունը, ծերացած ու մաշված ծնողներիս մոտ։

Այստեղ, ինչպես արդեն գիտեք, յես մի կերպ հազի եյի ճարում որվա չոր հացը՝ բատրակությունն անելով հարուստ գյուղացիների դռանը։

— Դոչաղ ես, Պետո ջան, դոչաղ, — այս ու այն կողմից առես միաբերան գոչեցին կոյխոզնիկները։

Շուտով նրանք փաթաթիցին իրենց շնելների մեջ և մեկը-մյուսի յետելից փակեցին աչքեր։

\* \* \*

Արեւ նոր. եր սկսել բարձրանալ, յերբ կոյխոզի սայլաշարքը հացի առատ բերքով ծանրաբեռնմած՝ արագությամբ իջնում եր լեռնաղաշտից դեպի քաղաք։



ՀՀ Ազգային գրադարան



NL0362971

56-361

ԳԻՒԾ  
50  
ԿՈՊ.

36-495



---

СУСАН

Из страниц прошлого

(На армянском языке)

ИЗД. ГАЗ. „ПРОЛЕТАР“

331-91  
— 77 —  
0-79